

**ԼՂԻՄ-Ի ՄԱՐԶԿՈՄԻ
ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԲԱՔՎԻ ԴՐԱԾՈՒ ԷՐ**

Խորհրդային տարիներին Հայաստանի Խորհրդային Հանրապետության ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ա. Առաքելյանը հաճախ էր այցելություն կազմակերպում Լեռնային Ղաղաբաղի Ինքնավար Մարզ¹: 1976 թ. հոկտեմբերի վերջերին ինստիտուտի չորս աշխատակից, այդ թվում նաև տողերիս հեղինակը, գնացինք Ստեփանակերտ՝ դասախոսություններ կարդալու: Մենք ծանոթանում էինք տեղի իրավիճակին, խորհուրդներով օգնում ղեկավարությանը և կարդում էինք դասախոսություններ: Ամեն ինչ ընթանում էր հաշտ ու համերաշխ՝ բարեկամական մթնոլորտում: Մեկ անգամ էլ դասախոսություն կազմակերպվեց Ստեփանակերտի մարզկոմի առաջին քարտուղար Կևորկովի օրոք, որն այնքան էլ խաղաղ չանցավ: Մարզկոմի քարտուղարը Ա. Առաքելյանի հեռախոսագանգին պատասխանեց, որ այդ օրը չի կարող ընդունել մեզ: Հաջորդ օրվա գանգին պատասխանեց, որ կարող է ընդունել միայն երեկոյան: Նույնը՝ չորս օր անընդհատ: Չորրորդ օրը Ա. Առաքելյանն ասաց.

- Կզեկուցես ինքդ, ընդունելությունը կլինի վաղը:

Բայց «վաղն» էլ չընդունեց: Բաքվից համաձայնվել էին զեկուցում կարդալու համար թույլատրել միայն ակադեմիկոսին և դոկտորին: Հետեվաբար, թեկնածուները զեկուցում չպետք է կարդային: Ակադեմիկոս Առաքելյանը հանդես եկավ ԱՄՆ-ում կատարած իր այցի մասին հուշերով, մեկ օր հետո դասախոսություն կարդաց ԽՍՀՄ տնտեսագիտության մասին². Հայաստանի մասին ոչ մի խոսք, քանի որ այդպես էր հրահանգված: Ես մանկավարժական ինստիտուտում ելույթ ունեցա խիստ ճնշման տակ. նախապես հիշեցրել էին, որ Հայաստանի բնակչության մասին հարկ չկա ծավալվել և պետք է խոսել աղբբեջանաբնակների ու նրանց գործունեության մասին: Թույլատրվեց խոսել ընդամենը 15 րոպե, հարցեր չեղան: Հաջորդ օրը, առավոտյան Կևորկովը Առաքելյանի գանգին պատասխանեց, որ շաբաթ օրը, երեկոյան ժամը 7-ին կարող է ընդունել:

Ընդունարանում մոտավորապես 40 րոպե սպասեցինք, հետո չորսիս էլ ընդունեց: Խոսակցությունը ռուսերեն էր: Ուրախությամբ հայտնեց, որ ինքը այս էլ երրորդ հայ ակադեմիկոսին է հանդիպում (Մ. Ս. Խաչատուրով, Անուշավան Արզումանյան և Ա. Ա. Առաքելյան): Անցանք խոսակցության բուն նյութին: Մայիսին եղել էր ԼՂԻՄ-ի կուսակցական կենտկոմի պլենումը, և զգալի թվով պատանիների կալանքի էին վերցրել ու դատի տվել: Այդ մասին ինձ հայտնի էր Ղաղաբաղի թերթերից, բայց ես լռում էի: Ոգևորված Կևորկովը վերամբարձ տոնով խոսք բացեց պլենումի մասին՝ հիշատակելով.

¹ Տե՛ս ՀՀ ազգային արխիվ, Վ. Ե. Խոջաբեկյանի ֆոնդ, N 266, ց. 1, գ. 73, թ. 1-4:

² Նույն տեղում:

- Ստեփանակերտում որոշ երիտասարդներ, հատկապես պատանիներ, ազգայնամոլական տրամադրություններով են լցված, և պլենումում նրանց հախից եկանք:

Ես, իբր թե այդ պլենումի մասին ոչինչ չիմանալով, վրա բերեցի.

- Այդ ի՞նչ պլենում է, այդ ի՞նչ երիտասարդության մասին է խոսքը:

Նա պատասխանեց.

- Մեր երիտասարդության «ազգայնամոլությունն» այն է, որ նրանք գիշերները «չերդակներում» կարդում էին Սողոմոն Թեկլիրյանի բեռլինյան դատավարության մասին գիրքը, որն արգելված է: Մենք նրանց դատի տվեցինք:

Ես ասացի.

- Իզուր եք այդպես վարվել:

- Խոսքը ոչ թե Թալեյրանի,- նա զայրացած ինձ նայեց,- այլ դաշնակցական տեռորիստ Սողոմոն Թեկլիրյանի մասին է, որը Բեռլինում դարանակալ սպանեց Թալեաթ փաշային:

- Ես գիտեմ, կարդացել եմ այդ գիրքը, շատ էլ լավ արեց, որ սպանեց Թալեաթ փաշային,- ասացի ես:- Այսօր երիտասարդությունն այդ մասին պետք է տեղեկանա:

- Ի՞նչ է, Դուք դաշնակցական ե՞ք,- առանց այլևայլության վրա բերեց նա:

- Ես կոմունիստ եմ, և Թալեաթի նման սրիկաներին, ոճրագործ մարդակերներին սպանելը իրոք հերոսություն է,- ասացի ես:

- Մինչդեռ պետք էր ծանոթանալ մեր պլենումի երկու ստվար հատորներով արձանագրություններին ու իմ զեկուցմանը:

Բերել տվեց պլենումի երկհատորանոց սղագրությունը՝ ասելով.

- Տեսե՛ք, Թալեաթի մասին ես ասել եմ, որ նա վատ մարդ է:

Ես էլի ինձ զսպել չկարողացա.

- Թալեաթը ոչ թե վատ մարդ, այլ արյունարբու գազան էր, հայ ժողովրդի ոճրագործ հրեշը, որը գլխավորեց մեկուկես միլիոն հայերի ցեղասպանությունը. նա է ասել՝ թողնել մեկ հայ, այն էլ թանգարանի համար: Մայիսյան պլենումում գարնանացանի ընթացքի մասին հարցը քննարկելու փոխարեն, քննարկում եք Թալեաթի՞ հարցը: Կենտկոմը տեղյա՞կ է դրանից:

- Այո, տեղյակ է:

- Չի կարող պատահել, Ադրբեջանի կենտկոմը կարող է տեղյակ լինել, իսկ ԽՄԿԿ կենտկոմը՝ հազիվ թե,- ասացի ես,- Դուք սխալ եք վարվել՝ երիտասարդությանը հալածելով:

Այստեղ նա անզուսպ կերպով ինձ անվանեց «դաշնակցական»: Ինչպես երևում էր, «դաշնակցականը» նրանց բերանի անարգական խոսքն էր: Ես վեր կացա: Բայց նա, նկատելով իմ վճռականությունը, բազուկիցս բռնելով, գրեթե մեղմաբար, խնդրեց ու հորդորեց նստել:

Սկսվեց Ղարաբաղի տնտեսական զարգացման մասին նրա ելույթը, միաժամանակ՝ Հեյդար Ալիևի գովքը: Յուրաքանչյուր երեք բառից երկուսը Հեյդար Ալիևն էր, նրա հոգատարությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Ապա ասաց, որ ինքը Հայաստանից ոչինչ չի ակնկալում, թե ինքն իրեն կարող է շատ լավ սպասարկել: Հետո բերեց մեկ օրինակ. իրենց պետք էին քարհատ մեքենաներ, և դրանք բերեցին Միջին Ասիայից:

- Հայաստանը քարհատ մեքենաներով առաջին հանրապետությունն է,- ասացի ես:

- Գերադասեցինք Միջին Ասիան,- եղավ Կոմկոմի պատասխանը:

Ապա սկսեց խոսել Ադդամ-Ստեփանակերտ երկաթգծի շինարարության մասին, որով Հ. Ալիևը շատ էր շահագրգռված:

- Պատին Խորհրդային Միության քարտեզն է,- ասացի ես,- կգտնե՞ք թեկուզ մեկ մարզ, որ երկաթգծով կապված չլինի կենտրոնի հետ, բացի Ստեփանակերտից:

Հարցը չլսելու տվեց և շարունակեց.

- IX հնգամյա պլանում Ադդամ-Ստեփանակերտ երկաթգծի մասին խոսք չկար: Հեյդար Ալիևը ինձ հանձնարարեց, որ այդ մասին խոսեմ ԽՍՀՄ պետպլանի նախագահ Բայբակովի հետ, ավելացնելով, որ եթե վերջինս չհամաձայնվի, ապա Բայբակովին ասեք, որ Հեյդար Ալիևը խնդրել է միջոցներ տրամադրել Ադրբեջանի հաշվին: Այդպես էլ եղավ: Այն մտավ IX հնգամյա պլանի մեջ: Բայց չկառուցվեց:

Հետո անդրադարձանք Լեռնային Ղարաբաղի պատկանելության հարցին: Ես ասացի, որ այն Մեծ Հայքի 12-րդ նահանգն էր: Իսկ նա պնդում էր՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին երբեք չի պատկանել և նշեց, որ Հայաստանը հաճախ է օտար նվաճողների ձեռքի սրմբակների տակ ոտնակոխ եղել, իսկ Ղարաբաղը և Զանգեզուրը երբեք: Ապա շարունակեց.

- Մեկ ամիս առաջ ինձ մոտ էր Սերո Խանգաղյանը: Նա ևս ձեզ նման պնդում էր այդ մասին, բայց այստեղից գնաց լրիվ փոխված:

Դրսում ակադեմիկոս Առաքելյանը գովեց իմ խիզախ քայլը: Միաժամանակ ինձ խնդրեց, որ այդ մասին Երևանում ոչ մի ակնարկ չանեմ, քանի որ լուրը կհասնի Կևորկովին, և նա հաշվեհարդար կտեսնի հայ բնակչության, մասնավորապես պաշտոնատար անձանց հետ:

Այդպես, որոշեցինք Երևանում այդ միջադեպի մասին ոչ ոքի ոչ մի խոսք չասել:

Անցան ամիսներ: Չմոռան մի երեկո զբոսնում էինք Մ. Նալբանդյանի արձանի շրջակայքում: Ինձ հանդիպեց համալսարանի պրոֆեսոր, ժուռնալիստ, ծնունդով դարաբաղցի Սմբատ Ավագյանը: Նա առանց այլևայլության ինձ համբուրեց: Ես զարմացա՝ ինչի՞ համար: Հիշատակեց Կևորկովի հետ հանդիպումը և իմ պահվածքը:

Ես հարցրեցի.

- Չէ՞ որ այդ մասին մենք ոչ ոքի որևէ բան չենք ասել, Դուք որտեղի՞ց գիտեք դա:

- Ի՞նչ է, միայն Դո՞ւք էիք այնտեղ,- պատասխանեց նա:

Ես հիշեցի մարզկոմի՝ գաղափարական գծով քարտուղարին, որը պաշտպանում էր Կևորկովին:

Պրոֆեսորը նկատեց.

- Քեզ թվում է, թե Կևորկովին էր պաշտպանո՞ւմ. համակրանքը քո կողմն էր³:

ԽՍՀՄ ԳԱ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ՝

1989 թ. մայիսի 17-19-ին ԽՍՀՄ ԳԱ նախագահ ակադեմիկոս Գ. Ի. Մարչուկը Երևանում հրավիրեց համամիութենական ընդհանուր ժողով⁴:

³ Նույն տեղում, թ. 4:

⁴ 1989 թ. մայիսի 17-19-ի ընդհանուր տարեկան ժողովի N 1 արձանագրություն: Ժողովի մասին տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության Ազգային արխիվում ակադեմիկոս Վ. Ե. Խոջաբեկյանի անվամբ գրանցված նյութերը: Տվյալ դեպքում տե՛ս, ՀԱԱ, ֆ. 266, ց. 1, գ. 59, թ. 1:

Ժողովին մասնացում էին միութենական, այդ թվում՝ Անդրկովկասի հանրապետությունների ակադեմիաների նախագահները: Առաջարկվել էր գումարել ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր ժողով՝ Ադրբեջանի և Հայաստանի միջև «բարեկամություն» հաստատելու կապակցությամբ: Այդ մասին, երբ նախօրոք հայտնել էին բաժանմունքում, ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանն առարկել էր, որ Վիկտոր Համբարձումյանը ժողով պետք է հրավիրի ոչ թե Ադրբեջանի հետ բարեկամություն հաստատելու կապակցությամբ (խնդիր էր դրվում, որ Ղարաբաղյան շարժման այդ օրերին նույն բարեկամական այցով Բաքու մեկնի նաև Վ. Համբարձումյանը), այլ ակադեմիայի ընդհանուր ժողովում լսվի Վ. Համբարձումյանի ելույթը՝ «Երկրաշարժի տնտեսական հետևանքները վերացնելու հարցը»⁵: Բաժանմունքի ըմբոստացած անդամները պաշտպանեցին Վ. Խոջաբեկյանի առաջարկությունը՝ նշելով, որ այլապես ակադեմիայի ընդհանուր ժողովին չեն մասնակցի:

Ակադեմիայի բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Գագիկ Սարգսյանը, մեր վրդովմունքը մեղմելու համար գնաց Համբարձումյանի մոտ: Վերադարձավ՝ հայտնելով, որ ինքը՝ Համբարձումյանը ևս, այդ կարծիքին է, և հակառակ դեպքում ժողով չի հրավիրի:

Գագիկ Սարգսյանն առաջարկեց կազմել հանձնաժողով՝ Համբարձումյանի ելույթի տեքստը նախապատրաստելու համար: Կազմվեց հանձնաժողով: Մի քանի օր հետո այդ նյութը Գագիկ Սարգսյանը ներկայացրեց Համբարձումյանին: Նա, ծանոթանալով նյութերին, վերադարձրեց դրանք՝ հայտնելով, որ ելույթը ինքը կնախապատրաստի: Նա, ինչպես միշտ, ելույթի համար ուրիշների գրած նյութից հրաժարվեց՝ ասելով, որ ինքը արդեն ելույթի համար նախապատրաստվել է, բայց երկրաշարժի «տնտեսական հետևանքների վերացման» թեմայով իր գրածը ժողովում թող ներկայացնի Խոջաբեկյանը:

Ակադեմիական բարձր ամբիոնից հնչեց Վ. Համբարձումյանի ձայնը՝ տոգորված խորին մտահոգությամբ և հնչեղ ու խրոխտ. նա ի լուր ողջ աշխարհի ազդարարեց Հայաստանը բնության ահեղ և անգույթ տարերքից փրկելու ձեռնարկումների մասին:

Համբարձումյանը խոսեց ուղիղ կես ժամ, գիտական բարձր մակարդակով, վերլուծելով և ներկայացնելով եղելությունը հույժ տպավորիչ և ազդեցիկ՝ իր խոսքերով ու մտքերով: Ավարտին, այն է՝ տեղատարափ ծափեր էին հորդալու, բայց ակադեմիան իրեն զսպեց և Համբարձումյանի առաջարկությամբ հոտնկայս հարգեց երկրաշարժի զոհերի հիշատակը:

Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը ժողովին նախապատրաստվելու պահին նպատակահարմար գտավ, որ երկրաշարժի մասին հանդես գա ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանը: Բայց այդ թեմայով երկրաշարժի օրերին՝ 1988 թ. դեկտեմբերի 16-ին, Երևանում, ԳԱ-ում տեղի ունեցած ժողովում, որտեղ երկրաշարժից հետո ստեղծված իրավիճակի մասին իր զեկույցով հանդես էր եկել Նիկոլայ Ռիժկովը, ելույթ էր ունեցել նաև Վ. Խոջաբեկյանը: Ն. Ռիժկովը չափազանց բարձր էր գնահատել Վ. Խոջաբեկյանի ելույթը՝ գտնելով, որ տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի տեղակալ Վ. Խոջաբեկյանը հանգամանորեն էր ներկայացրել երկրաշարժի սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիական հետևանքները՝ կանխորոշելով ապագա դրսևորումների ընթացքը:

⁵ Խոջաբեկյան Վ., Վիկտոր Համբարձումյան, նվիրված է ծննդյան 100-ամյակին, Ե., 2008, էջ 222:

Անհրաժեշտ էր մշակել և գիտականորեն հիմնավորել միջոցառումների այնպիսի համակարգ, որը կապահովեր լրացուցիչ միջոցներ՝ միութենական և հանրապետական բյուջեներից Հայկական ԽՍՀ ծնելության խրախուսման նպատակով, երկարացնել հետծննդյան արձակուրդը և ավելացնել կանանց տրվող նպաստի չափը, օժանդակել կանանց մայրական պարտականությունների և աշխատանքային ու հասարակական գործունեության միջև օպտիմալ հարաբերակցության ձևավորմանը: Երբ Մարչուկը Վ. Խոջաբեկյանին հրավիրեց ելույթի, Խոջաբեկյանն ակնարկեց, որ Վ. Համբարձումյանը իրեն խնդրել էր ելույթ ունենալ երկրաշարժի հետեվանքների և դրանց վերացման մասին: Բայց, քանի որ նա այդ թեմայով արդեն խոսել էր, անցավ իր ելույթի հիմնական մասին, այն է՝ Ղարաբաղյան շարժման օրերին Ղարաբաղում ստեղծված իրավիճակին՝ խիստ նշավակելով Ադրբեջանին, ԽՍՀՄ ԳԱ նախագահին մատնանշելով Ադրբեջանում տիրող կացությունը և հարց դնելով, որ ժողովին ներկա է Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտը և, որ նա թող պատասխան տա, թե ինչո՞ւ են Ադրբեջանում կեղծում պատմությունը և հանիքավի մեղադրում հայերին:

Վ. Խոջաբեկյանն իր ելույթում կանգ առավ երկու հարցի վրա:

Առաջինը վերաբերում է Ադրբեջանի «վայ» պատմաբաններին, որոնք խեղաթյուրել են և շարունակում են խեղաթյուրել ժողովուրդների պատմությունը: Սկզբում ադրբեջանական «պատմաբանները», օսմանյան թուրքերի օրինակին հետևելով, իրենց տարածքը հռչակեցին և զավթեցին պատմական Հայաստանի մի մասը, իսկ հետո՝ պատմական արժեքները, մշակույթի կոթողները, խաչքարերը, ընդամին, «սրբազան պատերազմ» հայտարարելով այդ նույն պատմության և մշակույթի այդ «ադրբեջանական» կոթողներին:

Ինչո՞ւ Ադրբեջանի գիտությունների ակադեմիան չի արձագանքում: Նա դիմեց նաև ԽՍՀՄ ԳԱ նախագահ Մարչուկին «Ինչո՞ւ չի ստեղծվում ԽՍՀՄ հեղինակավոր պատմաբանների հանձնաժողով՝ պատշաճ հակահարված տալու համար այդ «վայ» պատմաբաններին, որոնք պատմագիտությունը դարձրել են իրենց իդձերի իրականացման դաշտ:

Երկրորդ հարցը վերաբերում է այն անձանց, ովքեր ներկայիս Ադրբեջանում հրահրում են ազգայնամոլական հիստերիա, արտահայտում իրենց անբարյացակամությունը հայ ժողովրդի նկատմամբ և՛ բանավոր, և՛ գրավոր ելույթներում, հեռուստատեսությամբ ու ռադիոյով, մամուլով՝ ոտքի հանելով իրողությունը չիմացող ժողովրդական զանգվածներին:

Անհրաժեշտ է նաև բացահայտել ճշմարտությունը կենտրոնական մամուլում և տեղեկատվության այլ աղբյուրներում ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ-ի իրադարձությունների սխալ մեկնաբանման վերաբերյալ:

Սովորական է դարձել, օրինակ, «Իզվեստիա» թերթում պաշտոնական անձի հետ հարցազրույցը, որտեղ հեղինակը պնդում էր, որ Սումգաիթը պայմանավորված է Ստեփանակերտի իրադարձություններով և Սումգաիթում կուտակված սոցիալ-տնտեսական խնդիրներով: Այնպես է ստացվում, որ իմաստ չունի բարձրացնել ազգային ինքնորոշման հիմնախնդիրը, այլապես սպանող կկազմակերպվի: Եվ, էթե Ադրբեջանում առկա են սոցիալ-տնտեսական խնդիրներ, դրանցում հայերն են մեղավոր: Չէ՞ որ, էթե Սումգաիթում կազմակերպվեին շարժումներ ընդդեմ սոցիալական անարդարության, ապա դրանք ուղղված կլինեին քաղաքի և հանրապետության ղեկավարության գործունեության դեմ, այլ ոչ թե հայերի:

Այն է, երբ Վ. Խոջաբեկյանը ելույթը պիտի ավարտեր, իջներ ամբիոնից, ԽՍՀՄ ակադեմիայի պրեզիդենտը հարց տվեց. «Դուք կցանկանայի՞ք Ադրբեջանի ակադեմիայի հետ այդ կապակցությամբ բանավիճել»: Վ. Խոջաբեկյանն առանց վարանելու պատասխանեց. «Այո, բայց ադրբեջանցիներն այդ քայլին չեն դիմի»: Մարչուկն ասաց. «Ադրբեջանի ակադեմիայի պրեզիդենտը այստեղ է և խոստանում է»: Խոջաբեկյանը պատասխանեց. «Խոստումը կմնա խոստում»:

Իրոք այդպես էլ եղավ:

Դահլիճն արձագանքեց բուռն ծափահարություններով՝ մոռանալով երկրաշարժը, քանզի երկրաշարժի օրերին Ղարաբաղի հիմնահարցը ևս կարևոր էր:

ԽՈՋԱԲԵԿՅԱՆ Վ. Ե.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս